

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի ապրիլ ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 10 առաջարկություն, դիմում և բողոք, որից 5-ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Ինտենսիվ պտղատու այգի հիմնելու նպատակով վարկային տոկոսադրույքների սուբսիդավորմամբ վարկ տրամադրելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրից օգտվելու համար կարող է դիմել «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին, «Քարդ կրեդիտ», «Ֆարմ կրեդիտ Արմենիա», «Կամուրջ», «Հայաստանի Զարգացման և Ներդրումների կորպորացիա» վարկային կազմակերպություններին: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգի-

						ների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում վարկերը տրամադրվում են իրավաբանական անձանց, այդ թվում՝ կոոպերատիվներին ու անհատ ձեռնարկատերերին հայկական դրամով, առավելագույնը 14%-ով (հուշագիրը կնքվել է 12%-ով) վարկի մարման 7 տարի ժամկետով, մայր գումարի 1 տարի արտոնյալ ժամանակահատվածով, մարման պարբերականությունը կազմում է 6 ամիս: Վարկը տնտեսավարողին տրամադրվում է 5% տոկոսադրույքով: Վարկը տրամադրվում է 1-10 հեկտար ինտենսիվ պտղատու և 0,5-5 հեկտար հատապտղատու այգիներ հիմնող տնտեսավարողներին:
Հորատանցք փորելու թույլտվություն ստանալու հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1	1			
Հացաբուլկեղենի արտադրամասում թույլ տրվող խախտումները վերացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնագետներն այցելել են ք. Երևան, Հալաբյան 23 հասցեում գործող «Շառոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին պատկանող հացի արտադրամաս: Ուսում-

						նասիրության ընթացքում պարզվել է, որ դիմումում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, տնտեսավարողը իր գործունեությունն իրականացնում է համաձայն սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող օրենսդրական պահանջների: Առկա են եղել որոշակի թերություններ, որոնք վերացվել են տնտեսավարողի կողմից:
«Ա.Ա.Թ.Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող հողաշինարարական աշխատանքները կասեցնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսական տեխնիկայի գրանցման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Ընդամենը	10	8	3		5	2 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Մասնագիտական կրթություն չունեցող անձանց կողմից անասնաբուժական դեղորայքի վաճառքն արգելելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական գործունեությամբ զբաղվելու իրա-

					<p>վունք ունեն անասնաբուժական մասնագիտական կրթություն ունեցող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև համապատասխան մասնագետներով ապահովված իրավաբանական անձինք:</p> <p>Անասնաբուժական դեղատների արտոնագրեր տրամադրելու վերաբերյալ տեղեկացվել է դիմումատուին, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղատնային գործունեությունը լիցենզավորման ենթակա չէ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղատնային գործունեության իրականացման կարգը և անասնաբուժական գործունեության իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը:</p>
--	--	--	--	--	--

<p>Ինտենսիվ պտղատու այգի հիմնելու նպատակով վարկային տոկոսադրույք- ների սուբսիդավորմամբ վարկ տրամադրելու, ցածր տոկոսադրույքով վարկ հատկացնելու գործում օժանդակելու մասին</p>	<p>2</p>	<p>2</p>			<p>2</p>	<p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարին ուղղված նրա 2018 թվականի ապրիլի 6-ի նույնաբովանդակ առցանց դիմումին պատասխանվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի 2018 թվականի ապրիլի 10-ի N Ա2Հ/ ՌՆ-2/3331-18 գրությամբ:</p> <p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39-Ա արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, որն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի վարկավորմանը: Որոշումը տեղադրված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքի պետական օժանդակության ծրագրերի բաժնում (Կայք՝ http:// www. minagro. am/):</p> <p>Նշված ծրագրով գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար վարկերը տրամադրվում են 3-10մլն. դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով, ելնելով գործունեության կոնկրետ</p>
---	----------	----------	--	--	----------	---

					<p>ծրագրով նախատեսված ներդրումների բնույթից: Վարկերը տնտեսավարողներին տոկոսադրույքների սուբսիդավորման արդյունքում տրամադրվում են 5% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով:</p> <p>Տոկոսադրույքի և մայր գումարի մարման համար ֆինանսական կառույցի կողմից կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ, առավելագույնը 12 ամիս:</p> <p>Ֆինանսական կառույցի համար սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է հանդիսանում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Ուսուցումն անցնելուց և հավաստագիր ստանալուց հետո, վարկ ստանալու համար անհրաժեշտ է դիմել « ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ին, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին կամ վարկային կազմակերպություններին՝ «ԲԱՐԴ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»</p>
--	--	--	--	--	---

						<p>ՈՒՎԿ, «Կամուրջ» ՈՒՎԿ, «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ին:</p> <p>Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ գործող առևտրային բանկերը և վարկային կազմակերպություններն են կրում վարկային ռիսկի պատասխանատվությունը և իրենք են ընտրում վարկ ստացող անձանց, որոնց գործունեությունը համապատասխանում է իրենց վարկավորման կարգին:</p>
Կոկորդիլոսի ձվի ներկրման կարգի և պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	1	1	1			<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի ապրիլի 17-ի ԻԱ/ԼԻ-2/3683-18 գրությամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն կոկորդիլոսի ձվի ներկրման կարգի և պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ:</p>
Ցուլիկներ ձեռք բերելու հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	5	4	1		3	1 դիմում ընթացքի մեջ է:

2018 թվականի ապրիլ ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 6 ընդունելություն: Մարմնի ղեկավարի մոտ ընդունելության համար քաղաքացիներ չեն դիմել:

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված բնույթը	Ընդամենը	Տրվել է Դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տավարաբուծության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1			Քաղաքացուն պարզաբանվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող անասնաբուծության ոլորտի զարգացմանն ուղղված 2018 թվականի ծրագրերը և միջոցառումները:
Գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ ծրագրային առաջարկի իրականացմանն օժանդակություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացու կողմից ներկայացված ծրագիրը քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում և առաջարկվել է նրան արված առաջարկությունների հիման վրա այն լրամշակել, մասնավորապես ներառելով ծախսերի հիմնավորված հաշվարկ և ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:
Գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերը պարզաբանելու մասին	1	1			Քաղաքացուն պարզաբանվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող անասնաբուծության ոլորտի զարգացմանն ուղղված 2018 թվականի ծրագրերը և միջոցառումները:

Գյուղատնտեսական մթերքի իրացման հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			
Մթերված խաղողի արժեքի վճարման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	2	2			
Ընդամենը	6	5		1	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Ընդամենը					